Հունիսի 7-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 23 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի «Մարի Իզմիլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի տեսողության հաշմանդամություն ունեցող երեխաների համար «Արև» համակրգի տեղադրում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի կենցաղային կեղտաջրերի և կենտրոնական հիվանդանոցի կոլեկտորների կառուցման հեղինակային հսկողություն», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիքգյուղի համայնքային կենտրոնի կառուցման նախագծում» և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Երեխաների աջակցության կենտրոնի օդափոխության և էլեկտրամատակարարման համակրգերի մոնտաժային աշխատանքների» և «Վաչե և Թամար Մանուկյաններ մատենադարանի ցանկապատի կառուցման» ծրագրերը.

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադարմի կողմից իրականացվող «Նոր Նորքի 2-րդ զանգավծի հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի 1-ին մասնաշենքի 1-ին հարկի վերանորոգում» ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության Բնապահպանության Նախարարության, Կովկասի բնության հիմնադարմի և «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2013 թվականի» և «Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 04.03.2011 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2013 թվականի» ծրագրերը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Համակարգչային տեխնիկայի և հարակից սարքավորումների մատակարարում Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի չորս դպրոցներին», «Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի դպրոցներին լաբորատոր փորձասարքերի մատակարարում», «Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի կիրակնօրյա դպրոցի թաղիքագործության արհեստանոցի տարածքի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա քաղաքի Սուրբ Գևորգ

աղոթատեղի և կիրակնօրյա դպրոցի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի ոռոգման ջրագծի վերանորոգում» և «Կենցաղային սարքավորումների մատակարարում Արագածոտնի մարզի վեց համայնքների նախադպրոցական կրթական հաստատություններին, բուժհաստատություններին և անասնաբուժական կետերին» ծրագրերը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի խմբասենյակների հիմնանորոգում» ծրագիրը.

«Քրոնիմետ» բարեգործական հիմնադարմի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքի Կայանի միջնակարգ դպրոցի մասնակի վերանորոգում» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան գյուղում մանկապարտեզի կառուցման նախագծում» ծրագրերը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բուժկետի կառուցում» ծրագիրը.

«Հայ արտ սինեմա» հիմնադարմի կողմից իրականացվող «Կինոռեժիսուրայի բարձրագույն դպրոց» ծրագիրը.

«Օյունջյան» բարեգործական հիմնադարմի կողմից իրականացվող «Արվեստի» արվեստի կենտրոնի կառուցում» ծրագիրը.

«Արմենիա Լայթհաուս» բարեգործական հիմնադարմի կողմից իրականացվող «Հույսի ճրագ» բարեգործական ծրագիրը.

«Մոդուս Վիվենդի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Եղբարյության կամուրջ» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: